ԶԼՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԽԱՌԱՏՅԱՆ Լ. Ա.

Իր գոյության առաջին իսկ օրվանից մամուլի առաջնահերթ գործառույթներից մեկն է եղել լուսաբանել քաղաքական իրադարձությունները, սակայն միայն վերջերս տարբեր երկրներում ընտրությունների գործընթացում նշանակալի դեր վերապահվեց զանգվածային լրատվամիջոցներին:

Մի շարք երկրներում ժողովրդավարական ընտրությունները ինքնին նոր ֆենոմեն են: Ասիայի և Աֆրիկայի նախկին գաղութացված պետություններում ազատ և թափանցիկ ընտրությունները կյանքի կոչվեցին միայն XX դ. երկրորդ կեսից: Խորհրդային Միության երկրներում ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտը ներմուծվեց բավական ուշ: Նույնիսկ Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ամերիկայի երկրները ամբողջությամբ ժողովրդավարացվեցին Երկրորդ աշխարհամարտից հետո: ԱՄՆ-ում ընտրական սահմանափակումները վերջնականապես վերացվեցին 1960-ական թվականներին: Լատինական Ամերիկայում ժողովրդավարության ավանդույթները ոտնահարվեցին ռազմական դիկտատուրաների հաստատման հետևանքով, մասնավորապես՝ 1960-1980 թվականներին: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի մի շարք երկրներում այդ ժամանակաշրջանում արդեն հաստատվել էին անկախ լրատվամիջոցներ, թեև քաղաքացիների ոչ բոլոր ընտրական իրավունքներն էին երաշխավորված: Մինչդեռ մյուս երկրներում անկախ լրատվամիջոցները սկսեցին գործառել ընտրվող կառավարության համակարգը հաստատելու փորձերի հետ միաժամանակ: Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան և Լատինական Ամերիկան մշակեցին ԶԼՄ՝ որպես չորրորդ իշխանության տեսությունը, որը կոչված էր իրականացնելու վերահսկողություն կառավարության գործունեության նկատմամբ: Այս տեսակետը տեղ է գտել միջազգային օրենսդրությունում, սակայն գործնականում դրա կիրառությունը հստակ արտահայտված չէ: Ընդհանուր առմամբ, անկախ մամուլը զարգանում էր քաղաքական իրավունքների և ազատությունների զարգացմանը զուգընթաց:

Մինչև վերջերս տպագիր ԶԼՄ-ն տեղեկատվության միակ աղբյուրն էր: Տպագիր մամուլն ուներ կարևոր քաղաքական նշանակություն այն պատճառով, որ գրագիտությունը համարվում էր փոքրամասնության մենաշնորհ: Երբ հարցը հանգում էր քաղաքական գաղափարները հասարակությանը հասցնելուն, հեռուստառադիոհեռարձակումը ամբողջությամբ հեղափոխականացվում և դառնում էր ժողովրդավարական: Այդպիսի իրավիճակը մտահոգություն էր պատճառում մասնավորապես այն անձանց, որոնք պատասխանատու էին ընտրությունների

կազմակերպման համար: Այսպես, Բրիտանական Բի-Բի-Սի հեռուստառադիոընկերությունը կիրառում էր «14-օրյա կանոնների» սկզբունքը, որն արգելում էր որևէ հարցի լուսաբանում մինչև հարցի վերջնական քննարկումը խորհրդարանում՝ երկու շաբաթ տևողությամբ: Եվ միայն 1951 թ. հրապարակվեցին ընտրություններին վերաբերող առաջին ծրագրերը:

Հայտնի է, որ ժամանակակից ընտրական համակարգում գերակայությունը պատկանում է հեռուստատեսությանը, որի արմատները կարելի է տեսնել դեռ 1960-ական թթ.՝ ԱՄՆ նախագահի թեկնածուների առաջին պատմական բանավեճերից: Սակայն եթե հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակության ոչ բոլոր անդամներն են դիտում հեռուստացույց, և որոնց համար տեղեկատվության առաջնային աղբյուրն է ռադիոն, այդ իսկ պատճառով ճիշտ չէ նախապատվությունը միանշանակ տալ հեռուստատեսությանը: Այսպես, ժողովրդավարական հասարակարգի բնորոշ պետություն է Հնդկաստանը, որտեղ տեղեկատվության կարևորագույն աղբյուրը ռադիոն է:

Բայց անգամ այն երկրներում, որտեղ հեռուստատեսությունը գերակայում է քաղաքական բանավեճերի առումով, այդ բավական նոր երևույթ է: Բազմաթիվ արևելաեվրոպական երկրներում մասնավոր հեռարձակումը օրինականացվեց միայն 1980-ական թթ., երբ ընտրությունների լուսաբանումը դեռևս շարունակում էր մնալ պետական մարմինների խիստ վերահսկողության ներքո:

Ընդհանուր առմամբ, ԶԼՄ-ի միջոցով ընտրությունների ընթացքում կատարվող իրադարձությունների մասին ամենից առաջ հայտնի է դառնում ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ միտինգների և ամբիոններից ելույթների միջոցով, որպես մեծ հետաքրքրություն դրսևորող ընտրողների կատեգորիա:

Եթե հիմք ընդունենք Մարշալ Մաքլյուենի[1] հանրահայտ թեզը, ապա տեղեկատվության հիմնական միջոցը հայտարարությունն է: Անկասկած, ընտրությունների ժամանակ բազմաթիվ հայտարարություններ փոխանցվում են միևնույն միջոցներով: Այսպես, ամերիկյան նախընտրական քարոզարշավի ամենահայտնի բանավեճերը տեղի էին ունեցել Քենեդիի և Նիքսոնի միջև 1960 թ., ինչպես նաև դրանից մոտ մեկ դար առաջ՝ Լինքոլնի և Դուգլասի միջև. առաջինը դարձավ հեռուստատեսության միջոցով ընտրությունների լուսաբանման նախադրյալ: Այս երկու տեսակի կարծիքների փոխանակման մեջ ավելի շատ ընդհանրություններ կան, քան տարբերություններ:

Ժողովրդավարական հասարակարգում ընտրությունները համարվում են հասարակական կյանքի քաղաքական գործընթացի կարևոր տարր: Ընտրությունների ընթացքում ԶԼՄ-ները իրականացնելով մի շարք գործառույթներ, օժտված են լայնածավալ իրավունքներով և պարտականություններով: Առաջնային

---

[1] **Маршал Г. Маклюен.** *Понимание, медиа, внешние расширения человека, пер. с англ. В. Г. Николаева, М., 2003, с. 9.*

գործառույթներից հատկապես կարևորվում է տեղեկատվության ապահովման և հասարակական վերահսկողության գործառույթը: Քաղաքացիների նախընտրական քարոզչության և տեղեկատվության տրամադրման հարցում ԶԼՄ աշխատանքի ուսումնասիրության նշանակությունը կայանում է նախ և առաջ օրենսդրական և նորմատիվ համակարգերում ուսումնասիրվող հարցերի շուրջ հակասությունների առկայությամբ, ինչպես նաև գործնականում տեսական դրույթների ոչ լիարժեք կիրառմամբ: Ընտրությունների ընթացքում պետք է պարզ և մատչելի լինի ինչպես թեկնածուների քաղաքականությունը, որոնք ներկայացնում են համապատասխան կուսակցության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն, այնպես էլ բուն ընտրական գործընթացը, որպեսզի ընտրողները հավաստի տեղեկատվության պարագայում կարողանան ճիշտ օգտվել իրենց ընտրական իրավունքից: Սակայն, ԶԼՄ գործառույթի ազատության ապահովման համար անհրաժեշտ են կարգավորման որոշակի չափորոշիչներ: Այսպես, ընտրությունների ճշգրիտ լուսաբանման ու մատչելիության ապահովման համար՝ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ԶԼՄ-ն ընդդիմադիր կուսակցությունների ԶԼՄ-ի նկատմամբ հանդես է գալիս երաշխավորի դերում: Միևնույն ժամանակ ԶԼՄ-ները չեն կարող առաջադրել և ներմուծել իրենց դիրքորոշումը և տեսակետները ընտրական տեղամասերից ԶԼՄ կատարած հարցումների արդյունքների մասին կամ ընտրությունների նախնական արդյունքների վերաբերյալ այնքան ժամանակ, քանի դեռ չի տրվել վերջին ընտրողի ձայնը: Այսպիսով, ԶԼՄ-ի գործունեության մեխանիզմներն ընտրական գործընթացում հանդես են գալիս որպես խոր և բարդ չափորոշիչների համակցություն, որի իրավասության ոլորտին են պատկանում հետևյալ տարրերը. իրավական սկզբունքները, միջավայրը, որում գործում է ԶԼՄ-ն, ընտրությունների ընթացքում իրականացվող ԶԼՄ-ի գործունեության օրենքները և կանոնները, ԶԼՄ-ի ոլորտում հարաբերությունների կարգավորումը:

ԶԼՄ-ի դերի գլխավոր նշանակությունը տեղեկատվական գործառույթի իրականացման մեջ է, հետևաբար՝ կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես են իրադարձությունները լուսաբանվում և ներկայացվում հանրությանը, որոնցից հետագայում կախված է հեռուստադիտողի, ընթերցողի և ունկնդրի դիրքորոշումը: ԶԼՄ-ի դերը կարևոր է նաև նրանով, որ ընտրությունների առավելագույն լուսաբանման միջոցով ապահովվում են քաղաքացիների՝ ընտրությունների նկատմամբ վստահությունը, հետևաբար՝ ընտրությունների մասնակցության բարձր աստիճանը[2]: Փորձենք պարզել, թե ինչ ազդեցություն են ունենում ԶԼՄ-ները հասարակության և ժողովրդի գաղափարախոսության վրա: Այսպես, ժողովրդավարական հասարակարգում ԶԼՄ-ն իրականացնում է հետևյալ երեք հիմնական գործառույթը.

1. Տեղեկացնում և իրազեկում է հասարակությանը, 2. արտահայտում է սոցիալական սուբյեկտների դիրքորոշումները, 3. գաղափարախոսական ազդեցություն ունենում մարդկանց գիտակցության վրա: Մամուլում իրադարձությունների մեկնաբանման

---

[2] **Թոխյան Ֆ.,** *Խորհրդարանական ընտրությունների սահմանադրահիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում, Ե., 2004, էջ 349:*

համար կարևոր են հետևյալ չափանիշները. անձնական՝ այսինքն, լրագրողի անձնական գիտակցության դրսևորումը՝ այս կամ այն իրադարձությունն ընկալելու համար: Այնուհետև, հրապարակայնության չափանիշը՝ փաստերի և իրադարձությունների մեկնաբանումը և գնահատումը հանրության կողմից: Ի դեպ, այն դրական է անդրադառնում ընթերցողի կամ լսարանի քաղաքական հայացքների ձևավորման և ակնկալիքների դրսևորման վրա և ինչ-որ չափով ձևավորում է նրա ինքնատիպ կերպարը: Հաջորդը՝ իդենտիֆիկացիոն չափանիշն է, այսինքն՝ լրագրողը նույնացնում է իրեն այս կամ այն սոցիալական սուբյեկտի հետ, որի անունից նա ներկայանում է:

Անհրաժեշտ է նաև տեխնոլոգիական չափանիշը, որը միայն վերջին տասնամյակում հասարակության մեջ դարձել է արդիական և տեղեկատվական ոլորտում գբաղեցնում է գերակայող դիրք:

Անհրաժեշտ է նկատել ԶԼՄ-ների գործունեության առանձնահատկությունները և գիտակցել դրանց կարևորությունը ժողովրդավարական հասարակարգում: Հայտնի է, որ ԶԼՄ-ն անփոխարինելի է ժողովրդավարության բազմակարծության բնականոն զարգացման և անարգել գործունեության ապահովման գործում: ԶԼՄ-ի գործառույթների շուրջ ընթացող բանավեճերը սովորաբար կենտրոնանում են այսպես կոչված «պահապան շան» դերի վրա: Կառավարության հաջողությունների և ձախողումների ուսումնասիրությունը և քննարկումները ԶԼՄ-ի համար, որի միջոցով ներկայացվում է իշխանությունների գործունեության արդյունավետությունը, համարվում են տեղեկատվական աղբյուր:

Սա միանշանակ օգնում է ապահովել իշխանությունների վերահսկողությունը: Այդուհանդերձ, ԶԼՄ-ին վերապահված է ոչ միայն հասարակությանը տեղեկացնելու կառավարության գործողությունների մասին գործառույթը, այլ նաև որոշակի դեր ընտրություններում հասարակայնության լայն մասնակցությունն ապահովելու գործում, մասնավորապես՝

1. աջակցել ընտրողներին՝ իրացնելու և կիրառելու իրենց ժողովբրդավարական իրավունքները.

2. իրազեկել հանրությանը ընտրական գործընթացի վերաբերյալ.

3. տրամադրել ամբիոն քաղաքական կուսակցություններին, որոնք ցանկանում եմ իրենց գաղափարները հասցնել ընտրազանգվածին.

4. կուսակցություններին միմյանց միջև բանավեճեր անցկացնելու հնարավորություն ընձեռել.

5. տեղեկացնել ընտրությունների արդյունքների մասին և իրականացնել ձայների հաշվարկման մոնիթորինգ:

Ընտրությունների ընթացքում ներկա դիտորդական խմբերը այսօր չեն կարող գնահատել ԶԼՄ-ի գործունեությունը՝ որպես ընտրությունների լուսաբանման գլխավոր չափանիշ, որի գործունեության միջոցով որոշվում է ընտրությունների արդարացիությունը: Միաժամանակ ընտրությունների գործընթացում ԶԼՄ-ի գործա-

ռույթները ձեռք են բերում կիրառական մեծ նշանակություն, որտեղ վիճակագրական վերլուծության մեթոդը համադրվում է ԶԼՄ-ի աշխատանքի ուսուցման մեթոդին, և վերլուծական հաղորդումների միջոցով իրադարձությունները հավաստի լուսաբանվում են: Այստեղ կարևորվում են երեք փոխկապակցված իրավունքներ.

1. ընտրողների իրավունքը. կատարել ընտրություն՝ լիիրավ իրազեկված լինելու հիմքով.

2. թեկնածուների իրավունքը՝ ընտրողներին ի գիտություն հասցնել իրենց քաղաքական ծրագիրը.

3. ԶԼՄ-ի իրավունքը՝ տրամադրել տեղեկատվություն հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև առաջադրել իր տեսակետը:

Այս իրավունքների հիմքում, անշուշտ, ընկած են կարծիքների, գաղափարների և տեսակետների ազատ արտահայտման և փոխանակման տեսանկյունները, որոնք կիրառվում են ոչ միայն ընտրական գործընթացի նախընտրական քարոզչության, այլ նաև ընտրությունների ամեն մի փուլում: Սակայն հենց ընտրական գործընթացի փաստական կողմը և այն հանգամանքը, որ ընտրություններն անցկացվում են օրենքով սահմանված ընթացակարգային նորմերին համապատասխան, առաջացնում են այն անձանց հետաքրքրությու- նը և մտահոգությունը, որոնց հուզում է ԶԼՄ-ների ազատության հարցը:

ԶԼՄ-ի ազատությունը հարգելու աստիճանը և տեսակետների բազմակարծության ապահովումն ընտրական գործընթացում համարվում են ժողովրդավարության թերևս ամենակարևոր նախապայմանը: Դեռ ավելին, նախընտրական քարոզարշավը հիանալի հնարավորություն է ընձեռում իշխանության մարմիններին կատարելու իրենց պարտավորությունները, ոչ միայն հարգել ԶԼՄ-ի անկախությունը, այլ նաև այն զանգվածային լրատվամիջոցներինը, որոնք պատասխանատվություն են կրում ժողովրդավարական գործընթացի պահպանման գործում:

Որպեսզի հասկանանք ԶԼՄ-ի գործունեության նշանակությունը ընտրական գործընթացի բոլոր փուլերում՝ սկսած նախընտրական քարոզարշավից մինչև ընտրությունների քվեարկության արդյունքների հրապարակման փուլը, անհրաժեշտ է պատկերացնել ընտրական համակարգի և ընտրական իրավունք հասկացությունների փոխհարաբերակցությունը: Այս երկու հասկացություններն ընդհանուր առմամբ համընկնում են, իսկ առօրյայում նույնացվում են և ունեն միևնույն նշանակությունը: Այդուհանդերձ, դրանց միջև գոյություն ունի որոշակի տարբերություն:

Ընտրական համակարգը, որպես հասկացություն, ընտրական իրավունքների տրամադրման կարգը կանոնակարգող, ընտրությունների անցկացման և քվեարկության արդյունքների հաստատման և հրապարակման գործառույթներն իրականացնող իրավական նորմերի համակցություն է: Քվեարկության արդյունքների հրապարակման փուլին բնորոշ են համամասնական և

մեծամասնական ընտրական համակարգերը: Առաջինի դեպքում խորհրդարանական ընտրությունների ընթացքում պատգամավորական մանդատները բաշխվում են տրված ձայներին համամասն, իսկ երկրորդի դեպքում մանդատները բաշխվում են ըստ ընտրատարածքների՝ տրված ձայների մեծամասնության հիման վրա: Այստեղ գործում է բացարձակ մեծամասնության սկզբունքը, որի դեպքում հաղթող է համարվում ընտրողների կողմից 50% + մեկ ձայն հավաքած թեկնածուն, կամ հարաբերական մեծամասնության սկզբունքը, երբ հաղթում է առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն: Այս հիմնական համակարգերի շրջանակներում յուրաքանչյուր պետությունում գոյություն ունեն էական առանձնահատկություններ, որոնցով հաստատվում է միանգամայն առանձին ընտրական համակարգ:

Ընտրական իրավունք հասկացությունը գործածվում է նույնպես լայն և նեղ իմաստով: Լայն առումով այն ամբողջ ընտրական գործընթացը կարգավորող նորմերի և կանոնների համակցություն է, որը համարվում է սահմանադրական իրավունքի առանձին ինստիտուտ, իսկ նեղ առումով ընտրական իրավունքն ընտրություններում մասնակցության իրավունքի տրամադրման կարգը կանոնակարգող նորմերի համակցություն է (ակտիվ և պասիվ ընտրական իրավունք): Ակտիվ ընտրական իրավունքն ընտրելու իրավունքն է, իսկ պասիվը՝ ընտրվելու:

«Ընտրական համակարգ» և «ընտրական իրավունք» հասկացությունները պետք է մեկնաբանել որպես միասնական համակարգի փոխկապակցված, մեկը մյուսով պայմանավորված և լրացնող տարրեր: Հայաստանի Հանրապետությունում այդ հասկացությունները ներառում են երեք տարբեր ենթահամակարգեր, որոնցով հաստատվում է պետական իշխանության համապատասխան մարմինների ընտրության կարգը քաղաքացիների կողմից: Եթե ՀՀ ընտրական համակարգը համեմատենք ՌԴ ընտրական համակարգի հետ, որին բնորոշ են չորս ենթահամակարգեր (ՌԴ սուբյեկտների օրենսդրական մարմինների պատգամավորների), կարող ենք տեսնել այն տարբերությունը, որ ընտրությունները անցկացվում են ՌԴ Սահմանադրությանը և դաշնային օրենքներին համապատասխան, այսինքն՝ անկախ ՌԴ մյուս սուբյեկտների մասնակցությունից և նրանց իրավահարաբերությունների կարգավորումից:

Ժողովրդավարության կայացման սկզբնական փուլում ԶԼՄ-ների գործունեության ոլորտում տեղի ունեցավ մամուլի մեկ մոդելից անցում դեպի այլ, սկզբունքորեն նոր մոդելի՝ հիմնված անմիջական գրաքննության վերացման և շուկայական հարաբերությունների հաստատման վրա: Մամուլի մոդելի փոփոխությունից առաջացած խառնաշփոթ իրավիճակը և դրան հաջորդող ԶԼՄ-ի ազատության նվաճումը հետագայում հանգեցրեց մի շարք խնդիրների, որոնցից «կախված էր» մամուլը 90-ական թթ. կեսերին[3]: Ճգնաժամի հիմնական պատճառն այն էր, որ (բացի օբյեկտիվ գործոններից, որոնք առաջացել էին երկրում անբարենպաստ իրավիճակից, մամուլի մոդելի փոփոխությունից) պետությունում ԶԼՄ-ների ոլորտի օրենսդրությունում առկա էին բացթողումներ՝ համապատասխան օրենսդրական նորմերի բացակայություն, որի

[3] **Заика Н. К.** *Правовые основы средств массовой информации, М., 2007, с. 8.*

հետևանքով ՁԼՄ-ների մասին օրենքով թերի էին կարգավորվում կամ գրեթե չէին կարգավորվում ՁԼՄ ոլորտի խնդիրները և հարաբերությունները:

Այսպես, ՌԴ սուբյեկտներին իրավունք է վերապահված ընդունել միայն իրավական ակտեր՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման հարցերի վերաբերյալ (ընտրողների ցուցակների կազմում, ընտրական տեղամասերի ստեղծում, ընտրական հանձնաժողովների ձևավորում): Իսկ եթե համեմատենք ՌԴ ընտրական համակարգը այլ դաշնային պետությունների՝ օրինակ, ԱՄՆ-ի ընտրական համակարգի հետ, իշխանության դաշնային մարմինների ընտրություններ ընտրական համակարգը (ԱՄՆ Նախագահի, Կոնգրեսի երկու Պալատների) միայն ընդհանուր իմաստով է կարգավորվում ԱՄՆ Սահմանադրությամբ, մինչդեռ այլ հարցերը կարգավորվում են դաշնության սուբյեկտների կողմից՝ նահանգների օրենքներով: Ռուսաստանի օրենսդրության առանձնահատկությունը մյուս, համեմատաբար նոր սահմանադրական կարգ ունեցող երկրների օրենսդրական ձևակերպումների հետ համեմատած՝ ակնհայտ է դառնում այն, որ նրանում բացակայում է ընտրական իրավունքի հատուկ բաժինը, որում ամրագրված կլինեին ընտրական իրավունքի ընդհանուր սկզբունքները՝ համընդհանուր, հավասար, ուղիղ ընտրությունները գաղտնի քվեարկությամբ և այլն: Միայն ընդհանուր իմաստով ակտիվ և պասիվ ընտրական իրավունքը ամրագրված է ՌԴ Սահմանադրության 32-րդ հոդվածում, ինչպես նաև ՌԴ նախագահի ընտրության կարգի որոշմանը վերաբերող հոդ. 81-ում:

Յուրաքանչյուր ենթահամակարգ կարգավորվում է առանձին իրավական ակտով, սակայն գոյություն ունեն նաև բոլորի համար ընդհանուր իրավունքի աղբյուրներ: Տարբերությունները դրանց միջև արտահայտվում են պասիվ ընտրական իրավունքի հաստատման կամ որոշման դեպքում, քվեարկության արդյունքների կարգի հաստատման և այլ կարևոր պայմանների առկայության դեպքում:

Հայտնի է, որ հասարակության ժողովրդավարացումը անխզելիորեն կապված է ժողովրդավարական գործընթացի հետ: Իսկ ՁԼՄ-ն համարվում է այդ գործընթացի տեղեկատվության ապահովման հիմնական երաշխավորը, որի շնորհիվ քաղաքացիները լիիրավ իրազեկվում են հասարակությունում տեղի ունեցող բոլոր զգալի գործընթացների և երևույթների փոփոխությունների, ինչպես նաև նրանց հուզող հարցերի լուծմանն ուղղված՝ իշխանությունների դիրքորոշման, գործողությունների, ջանքերի մասին:

Հասարակության ինտեգրմանը նպաստելը նշանակում է հասարակությանը բազմակողմանիորեն իրազեկել, ինչպես նաև ներկայացնել խմբավորումների և խմբակցությունների տեսակետները[4]:

Հասարակությանը տարբեր տեսակետներ ներկայացնելը կարևոր է այնքանով, որքանով մարդիկ կկարողանան հասկանալ և գիտակցել իրենց դիրքորոշումը

---

[4] **Голубок С. А.** *Конституционное право России, М., 2008, с. 64.*

ուրիշների տեսակետների համադրման լույսի ներքո, այս կամ այն հարցի քննարկման և համապատասխանեցման համար և ընդհանուր դիրքորոշում մշակելու նպատակով իրենց շահերը համադրել այլ ուժերի և խմբավորումների շահերին: ԶԼՄ-ն չի պարտադրում իր տեսակետները, խնդրի լուծման իր միջոցները, այն կոչված է ապահովելու երկխոսություն, դրանով հանդերձ՝ ցույց տալով նաև իր անձնական դիրքորոշումը, դրսևորելով հանդուրժողություն ուրիշների տեսակետների հանդեպ՝ առանց իրավարարի դերի հավակնելու, սակայն ունենալով ընդհանուր շահ և գերխնդիր՝ տարբեր ուժերի հետ փոխգործողության ապահովման համար:

ԶԼՄ-ի ժողովրդավարության ներուժի երկրորդ կարևոր հատկանիշն այն է, թե ինչպես է ԶԼՄ-ն օրենքի շրջանակներից դուրս բռ-լոր ծանրակշիռ փաստերը, հասարակական բարոյականության նորմերը, ինչպես նաև ոչ միայն քրեական տարրերի, այլև իշխանության մարմինների հակասոցիալական գործողությունները դարձնում հանրության քննարկման առարկա:

Քննադատելով օրենքի սահմաններից և հասարակության բարոյականության շրջանակներից դուրս իշխանության մարմինների գործունեությունը և գործողությունները՝ ԶԼՄ-ն հանդես է գալիս որպես ոչ կառավարական ընդդիմություն: Ժամանակակից ազատական հասարակարգերում ԶԼՄ-ի այդպիսի ընդդիմախոսի դերը գնահատվում է բավական բարձր: Այստեղ ԶԼՄ-ի քննադատությունը առավելապես ուղղված է տարբեր մակարդակի իշխանական մարմինների գործողությունների դեմ[5]:

Լինելով քաղաքացիական հասարակարգի ինստիտուտ, որի հիմնական խնդիրներն են նպաստել այդ հասարակարգի ժողովրդավարության կայացմանը, կազմակերպմանն ու ինտեգրմանը, պաշտպանել ժողովրդի իրավունքներն ու օրինական շահերը՝ ԶԼՄ-ն միևնույն ժամանակ հասարակությունում ձևավորվող քաղաքական և տնտեսական հարաբերությունների համակարգում հաճախ հանդես է գալիս իշխանության և գործարարության շահերի ներկայացուցչի դերում՝ թերանալով կամ գրեթե անգիտանալով իրեն վերապահված երաշխավորի դերը: Ամենևին էլ պարտադիր չէ, որ իշխանության, գործարարության և քաղաքացիների շահերը հակասեն միմյանց: Բայց և ոչ միշտ է, որ դրանք համընկնում են[6]:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԶԼՄ նպաստեցին ընտրությունների տեղեկատվության ապահովման ինստիտուտի զարգացմանը, որի հիմքում ընկած էր նախընտրական քարոզարշավում ընտրողներին իրազեկելն ու տեղեկացնելը: Առաջին անգամ տեղեկատվության ապահովման նորմերն օրենսդրորեն ամրագրվեցին 1997 թ. Ռուսաստանի Դաշնության «Քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին»

---

[5] **Заика Н. К.**, *նշվ. աշխ., էջ 6:*

[6] **Засурский Я.** *Средства массовой информации России, М., 2006, с. 79.*

դաշնային օրենքում: Տեղեկատվական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված այս հայեցակարգի հաստատումը պայմանավորված էր «տեղեկատվական պատերազմների», «կեղտոտ» նախընտրական քարոզարշավների անցկացման վերաբերյալ հասարակության համարժեք վարքագծի դրսևորման անհրաժեշտությունից: Հետխորհրդային ժամանակաշրջանի տեղեկատվական և քարոզչական նյութերը տարանջատող իրավական հստակ չափանիշների բացակայությունը թույլ էր տալիս նախկինում քարոզչություն իրականացնել՝ ելնելով քաղաքացիների տեղեկատվության ապահովման օբյեկտիվ անհրաժեշտությունից: Համաձայն այս հայեցակարգի՝ ՌԴ օրենսդրությունում, հետագայում նաև ՀՀ ընտրական օրենսդրությունում, ամրագրվեցին հետևյալ սկզբունքները՝ օբյեկտիվություն, հավաստիություն, թեկնածուների և ընտրական միավորումների իրավահավասարություն, ինչպես նաև քաղաքացիների տեղեկատվության տրամադրման հարցերով ԶԼՄ կազմակերպությունների գործունեության ազատություն: Իրականացնելով ընտրողներին տեղեկացնելու գործառույթը, ԶԼՄ կազմակերպությունները չպետք է թույլ տան, որ նրանց տեղեկատվական նյութերում պարունակվեն նախընտրական քարոզչության տարրեր, այլ կերպ՝ ԶԼՄ-ն պետք է հստակ տարանջատի իրադարձությունների լուսաբանումը և տեղեկատվության տրամադրումը քարոզչությունից: Տեղեկատվական նյութերը քարոզչությունից տարբերելու համար նախ պետք է պարզել՝ արդյոք լրատվամիջոցների տեղեկատվական նյութերում պարունակվում են նախընտրական քարոզչության տարրեր: Երկրորդ, արդյոք տեղեկատվության իրավունքը իրականացվում է օրենքով սահմանված կարգով և պայմաններով ու համապատասխանում է այն նորմերին, որոնք սահմանում է օրենսդրությունը: ԶԼՄ-ով տարածված կամ հրապարակված նյութերի բովանդակությունը պետք է լինի հավաստի, արժանահավատ, օբյեկտիվ, չպետք է խախտի թեկնածուների, քաղաքական կուսակցությունների, ընտրական դաշինքների հավասարության սկզբունքը: Հենց այս սկզբունքի իրացման դեպքում ԶԼՄ-ով հրապարակված որևէ նյութ կարելի է համարել տեղեկատվական: Մինչդեռ, երբ խախտվում է այս սկզբունքը, նյութը միանշանակ պետք է համարել քարոզչական: Այսպես, եթե թեկնածուի, քաղաքական կուսակցության, ընտրական դաշինքի մասին նյութը հավաստի է և օբյեկտիվ, սակայն տրամադրվում է միակողմանի, նպատակ ունենալով ընտրողներին շահագրգռել այս կամ այն թեկնածուի կամ որևէ ընտրական դաշինքների՝ կողմ կամ դեմ քվեարկելու համար, և միաժամանակ մյուս քաղաքական խմբավորումների, ընտրական դաշինքների և թեկնածուների մասին տվյալները լռելյայն շրջանցվում են, ապա այդպիսի տեղեկատվության տարածումը կարելի է համարել նախընտրական քարոզչություն:

Քարոզչական պետք է համարել նաև այն տեղեկատվությունը, որն ուղղակիորեն կոչ է անում և ուղղված է քվեարկելու որևէ թեկնածուի, քաղաքական կուսակցության, ընտրական դաշինքի օգտին կամ դեմ (նպատակն է դրդել

ընտրողներին քվեարկելու). այսինքն՝ քաղաքական կուսակցությունների, ընտրական դաշինքների, թեկնածուների վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի տեղեկատվության տարածման պարբերաբար նպատակաուղղված գործունեություն, որը սկզբնապես հավաստի չէ, առնչվում է ընտրություններին և ընտրական գործընթացի մասնակիցներին, տրամադրվում է տեղեկատվական հատուկ հնարքների օգտագործմամբ, ինչպիսին կարող է լինել տեղեկատվության և մեկնաբանության, փաստերի և ենթադրությունների խառը համադրմամբ տեղեկատվությունը[7]: Եթե իրավակիրառողական մարմինը (ընտրական հանձնաժողովը) նախընտրական քարոզչության կանոնների խախտմամբ տարածված նյութը որակի որպես քարոզչական, ապա այն իրավասու է այդ նյութի վերաբերյալ իր գնահատականը հաստատելու համար դիմել իրավասու մարմնին՝ դատարան, իրավախախտ անձանց պատասխանատվության կանչելու համար: Հաջորդ հարցը, որը նույնպես ունի կարևոր գործնական նշանակություն, առնչվում է ԶԼՄ-ների գործունեության որոշ սահմանափակումներին, նաև արգելքներին, որոնք բխում են հենց քարոզչություն իրականացնելու գործառույթներից: Այսպես, ժողովրդավարական երկրների ընտրական գործընթացի ուսումնասիրությունից երևում է, որ ԶԼՄ-ն չի դիտվում որպես քարոզչության գործառույթներ իրականացնող սուբյեկտ, և որ նրանք չեն կարող իրենց անունից իրականացնել քարոզչություն: Որոշ երկրներ նույնիսկ օրենքով սահմանված կարգով նախատեսել են քարոզչական գործունեության սահմանափակումներ: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածը, նաև «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածը պարտադիր կարգով սահմանել են քարոզչական գործունեությանն ուղղված արգելքներ: Նման արգելքների սահմանումը պայմանավորված է հասարակության մեջ գոյություն ունեցող մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների առկայությամբ: Այսպես, 1998 թ. առաջին անգամ ՌԴ ընտրությունների ընթացքում երեք լրատվամիջոցների ղեկավարներ, որոնք թույլ էին տվել ընտրական օրենսգրքի խախտումներ, մասնավորապես՝ ընտրություններին նախորդող օրվան նրանք տպագրել էին քարոզչական նյութեր՝ ենթարկվեցին վարչական պատասխանատվության: Ընդ որում, երկու թերթերի գլխավոր խմբագիրները՝ Կուզնեցովը և Կուչերը, օրենքով սահմանված կարգով ենթարկվեցին վարչական տուգանքի, մինչդեռ երրորդ թերթի գլխավոր խմբագիր Չիկինը, որը նաև Պետական դումայի պատգամավոր էր, օգտվեց այն ժամանակ գործող Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պատգամավորի կարգավիճակի մասին[8] օրենքով երաշխավորված պատգամավորական անձեռնմխելիության իրավունքից: Նշված

---

[7] **Большаков С. В., Казьмин В. И., Гришина М. В., Бундарина Н. А.** *Средства массовой информации и выборы, М., 2007, с. 2.*

[8] *Федеральный закон о статусе депутата Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации, 08.05.1994, статья 18.*

օրինակը վկայում է այն մասին, որ օրենքով թեև սահմանվում էին ԶԼՄ-ների գործունեության համար հավասար պայմաններ և երաշխիքներ, սակայն ոչ բոլոր լրատվամիջոցների վրա է տարածվում օրենքի գործողությունը, և ոչ բոլոր լրատվամիջոցներն են օժտված հավասար իրավունքներով ու պարտականություններով: Այստեղից էլ առաջ եկավ ընտրությունների գործընթացի նոր եզրույթներից մեկը՝ «նախընտրական քարոզչության իրավունքի չարաշահում», որը, ի դեպ, համահունչ է մեկ այլ՝ խոսքի իրավունքի ազատության՝ «խոսքի ազատության չարաշահում» եզրույթին: «Նախընտրական քարոզչության իրավունքի չարաշահման» միջոցով փորձ էր արվում «նախընտրական պայքար տանել քաղաքական մշակույթի շրջանակներում»[9]: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին դաշնային օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է քարոզչության չարաշահման իրավունքը՝ քարոզչության ընթացքում անթույլատրելի են զանգվածային տեղեկատվության ազատության չարաշահումները, մասնավորապես, սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական թշնամանք և ատելություն հրահրող քարոզչությունը, իշխանության զավթելուն, սահմանադրական կարգը բռնությամբ փոխելուն ուղղված կոչերը և տարածքային ամբողջականության դեմ ոտնձգությունը, պատերազմի քարոզչությունը և դաշնային այլ օրենքներով արգելված զանգվածային տեղեկատվության ազատության չարաշահման այլ ձևեր[10]: ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզչության գործընթացը սկսվում է ոչ թե ընտրությունները նշանակելու պահից, այլ թեկնածուների և կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը: Այլ է գրանցման կարգը Ռուսաստանի Դաշնությունում, որ նախատեսված է «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի 57-րդ հոդվածով, որտեղ մասնավորապես նշվում է, որ նախընտրական քարոզչության գործընթացը սկսվում է համապատասխան ընտրական հանձնաժողովում թեկնածուների ցուցակի գրանցվելու օրվանից:

Ընտրական օրենադրության կարևոր դրույթներից է, որը միևնույն ժամանակ նաև սկզբունք է՝ թեկնածուների և քաղաքական կուսակցությունների հավասարությունը չխախտելը: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին դաշնային օրենքի 39-րդ հոդվածի 1 կետի համաձայն՝ բոլոր թեկնածուներն ու կուսակցություններն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, արգելվում է որևէ խտրականություն՝ անկախ սեռի, ազգության, ռասայի,

---

[9] **Федотов М.** *Власть, зеркало или служанка. СМИ в отсутствие Ариадны, М., 1998, с. 121.*

[10] *Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին դաշնային օրենք, 05.09.1997, հոդված 45:*

կուսակցության պատկանելությունից, գործի բնույթից, զբաղեցրած պաշտոնից և այլն[11]:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 110-ով սահմանվում է, որ «պատգամավորության թեկնածուներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ»[12]: Բացի այդ, ընտրություններում թեկնածուների իրավահավասարության սկզբունքի իրականացումն ապահովվում է դաշնային օրենքում մի շարք կարևոր երաշխիքների ամրագրմամբ: Տեղեկատվության ապահովման ոլորտում այդ երաշխիքներն ամրագրված են հետևյալ դրույթներում.

1. նախընտրական միջոցառումների մասին ընտրողներին տեղեկատվությամբ ապահովելու ընթացքում անթույլատրելի է նախապատվություն տալ թեկնածուներից որևէ մեկին, այդ թվում՝ այդ թեկնածուի նախընտրական գործունեության լուսաբանման, տպագիր մակերեսի ծավալի մասին.

2. հեռուստահեռարձակման կազմակերպությունների, ինչպես նաև պետական և մունիցիպալ պարբերական տպագիր հրատարակությունների խմբագրությունների համար նախատեսվում է պարտականություն՝ գրանցված թեկնածուներին, ընտրական դաշինքներին և ընտրական միավորումներին ապահովել նախընտրական քարոզչության անցկացման հավասար պայմաններ, մասնավորապես, օրենքով սահմանված դեպքերում տրամադրել բոլոր թեկնածուներին հավասար ծավալով անվճար եթերաժամ և անվճար տպագիր մակերես, չմերժել վճարովի եթերաժամ տրամադրելը այն դեպքում, եթե մյուս թեկնածուներին այդպիսի եթերաժամ տրամադրվում է, չպարտադրել թեկնածուներին վճարել այլ վճար՝ տրամադրված եթերաժամի, տպագիր մակերեսի համար, որոնք հավասար են ծավալով և այլ չափանիշներով:

Թեկնածուների հավասարության սկզբունքը նշանակում է միևնույն թեկնածուների մասին մշտապես և անընդմեջ, թեկուզև աննշան, սակայն բացասական տեղեկատվության հրապարակման անթույլատրելիություն, ինչպես նաև միևնույն թեկնածուների վերաբերյալ անընդմեջ տեղեկությունների տրամադրում, ի տարբերություն մյուս թեկնածուների՝ նմանատիպ տեղեկատվությունը շրջանցելը և չհրապարակելը: Այլ կերպ ասած, ընտրողներին տեղեկաց- նելու ընթացքում խախտվում է թեկնածուների հավասարության սկզբունքը թեկնածուների վերաբերյալ չհաշվեկշռված տեղեկատվության տրամադրման, նրանց հանդեպ կողմնակալ գնահատականի դեպքում[13]:

Ինչպես նշեցինք, ԶԼՄ-ների և դրանց գործառույթների միջոցով կազմակերպվում և զարգանում են ժողովրդավարական հասարակարգի ինստիտուտները և կառուցակարգերը: Ժողովրդավարությունն ու ազատ լրատվամիջոցները

---

[11] *Федеральный закон об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации, 05.08 1997, статья 39, пункт 1.*

[12] *ՀՀ ընտրական օրենսգիրք, 2008, հոդված 110:*

[13] **Большаков С. В., Казьмин В. И., Гришина М. В., Бундарина Н. А.,** *նշվ. աշխ., էջ 3:*

փոխկապակցված և պայմանավորված են միմյանցով: ԶԼՄ-ի միջոցով իրացվում են ժողովրդավարական մի շարք կարևոր սկզբունքներ, իրավունքներ, այդ թվում՝ քաղաքական, մասնավորապես ընտրական իրավունքը՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը: Ընտրական ոլորտում լրատվամիջոցների գործունեությունն անհրաժեշտ է և պարտադիր, թեև վերջինիս համար այն ավելի շատ առաջացնում է պարտավորություններ, քան իրավունքներ: Եթե վերլուծենք վերոնշյալ ԶԼՄ-ների գործառույթները և համեմատենք ԶԼՄ-ների գործունեության այլ ոլորտների գործառույթների հետ, ապա կտեսնենք, որ դրանք ավելի շատ պարունակում են ընթացակարգային նորմեր, և ընտրությունների բուն գործընթացի նկատմամբ գուրկ են որևէ ազդեցությունից, այսինքն՝ ԶԼՄ-ի իրավասությունը սահմանափակված է օրենսդրական և նորմատիվ ակտերի շրջանակներով: Մի կողմից կարևորելով լրատվամիջոցների գործունեությունն ու սկզբունքների ճշգրիտ և անվերապահորեն իրականացումը՝ օրենսդիրը միևնույն ժամանակ ԶԼՄ-ին օժտել է երկրորդական, օժանդակ իրավունքներով, քանի որ ՀՀ ընտրական գործընթացում զգալի դեր է վերապահված ընտրական հանձնաժողովներին: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ լրատվամիջոցների գործառույթների շարքում կարելի է ընդգրկել ընտրությունների բոլոր փուլերի վերահսկողական գործառույթը, որի միջոցով անմիջականորեն կվերահսկվեն ընտրությունները, և կապահովվի ընտրությունների արդարացիության և օբյեկտիվության բարձր աստիճանը:

ПРИНЦИПЫ И ФУНКЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ СМИ В ПРОЦЕССЕ ДЕМОКРАТИЧЕСКИХ ВЫБОРОВ

ХАРАТЯН Л. А.

Резюме

В период выборов главной миссией средств массовой информации является освещение избирательного процесса. Масс медиа являют собой институт, содействующий проведению справедливых и законных выборов, поскольку деятельность средств массовой информации основана на демократических принципах, обеспечивающих легитимность и демократичность выборов, в силу чего возрастает функциональная значимость масс медиа в избирательном процессе.